կապիտալ
ասեթ
մենեջմենթ

ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԱՄՓՈՓՈԳԻՐ

Ուշադրություն

Հարգելի Հաճախորդ, տեղեկացնում ենք, որ Ձեր իրավունքները կարող են պաշտպանվել Մեզ, դատարան, կամ Ֆինանսական համակարգի հաշտարարին դիմելու միջոցով:

կապիտալ
ասեթ
մենեջմենթ

Մեզ դիմելու դեպքում Ձեր և մեր ընկերության միջև ծագած վեճը լուծվում է Հաճախորդի բողոք-պահանջները քննող աշխատակցի կողմից՝ «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» փակ բաժնետիրական ընկերության Հաճախորդների բողոք-պահանջների քննության” կանոնակարգի պահանջներին համապատասխան:

«Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ
Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Մ.Խորենացի 15, «Էլիտ Պլազա» բիզնես կենտրոն, 2-րդ հարկ, գրասենյակ 5
Հեռ. (374 10) 52 12 31
Ֆաքս: (37410) 52 12 31
Էլ. փոստ: info@capitalfunds.am
Աշխատանքային ժամեր՝ 9:00 – 18:00

Ֆինանսական համակարգի հաշտարարին դիմելու դեպքում Ձեր և «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» փակ բաժնետիրական ընկերության միջև ծագած վեճը լուծում է Հաշտարարը՝ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:
Ֆինանսական համակարգի հաշտարարի ծառայություններն անվճար են:
Բողոք ունենալու դեպքում Դուք նախևառաջ պետք է դիմեք Կապիտալ Ասեթ Մենեջմենթ փակ բաժնետիրական ընկերությանը: «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» փակ բաժնետիրական ընկերությունը պարտավոր է 10 աշխատանքային օրվա ընթացքում պատասխանել Ձեր բողոքին: «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» փակ բաժնետիրական ընկերության պատասխանը ստանալուց հետո Դուք կարող եք դիմել դինանսական համակարգի հաշտարարին:
Ֆինանսական համակարգի հաշտարարը չի կարող քննել Ձեր բողոքը, եթե՝

Ա. Բողոք ներկայացնելուց հետո դեռ չի անցել 10 աշխատանքային օր և Դուք չեք ստացել «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» փակ բաժնետիրական ընկերության պատասխանը, կամ

Բ. Դուք չեք պահանջում դրամական կամ այլ գույքային փոխհատուցում, կամ

Գ. Ձեր կողմից պահանջվող հատուցումը գերազանցում է 10 միլիոն դրամը կամ դրան համարժեք արտարժույթով գումարը, կամ

Դ. «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» փակ բաժնետիրական ընկերության պատասխանը ստանալուց հետո անցել է ավելի քան վեց ամիս, կամ

Ե. Ձեր կողմից բողոքարկվող գործողությունը կամ անգործությունը տեղի է ունեցել 2008թ.-ի օգոստոսի 2-ից առաջ:

Զգուշացնում ենք նաև, որ Ֆինանսական համակարգի հաշտարարը չի կարող քննել Ձեր բողոքը, եթե այն քննվում է դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի կողմից կամ արդեն իսկ առկա է այդ բողոքի վերաբերյալ դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի վճիռը:

Հաշտարար՝ Փիրուզ Սարգսյան
Հասցե՝ 0010, ք. Երևան, Մովսես Խորենացի փողոց 15,
«Էլիտ Պլազա» բիզնես կենտրոն 7-րդ հարկ
Հեռ.՝ (010) 582-421
Կայք՝ www.fsm.am

Հարգելի Հաճախորդ, հայտնում ենք Ձեզ, որ «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» փակ բաժնետիրական ընկերությունը չի հրաժարվել Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից: Դա նշանակում է, որ «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» փակ բաժնետիրական ընկերությունը կարող է որոշ դեպքերում դատական կարգով բողոքարկել Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» փակ բաժնետիրական ընկերության դեմ կայացված որոշումները:

Դուք կարող եք նաև բողոքներով դիմել Կենտրոնական բանկ: Տեղեկացնում ենք, որ Կենտրոնական բանկն իրավասու չէ լուծել Ձեր և Կապիտալ Ասեթ Մենեջմենթ փակ բաժնետիրական ընկերության միջև վեճերը, սակայն կարող է «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» փակ բաժնետիրասական ընկերության նկատմամբ կիրառել պատասխանատվության միջոցներ, եթե պարզվի, որ «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» փակ բաժնետիրական ընկերությունը խախտել է օրենքի պահանջները:

Հասցե՝ 0010, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 6
Հեռ.՝ (010) 592-697
Էլ. հասցե՝ chairman@cba.am
Ֆաքս՝ (010) 565-496
Կայք՝ www.cba.am